ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
17.06.2024Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 25 անդամները, բացակայում է՝ Անահիտ Խեչոյանը և Գարիկ Պալյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը:

Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը աշխատակազմի քարտուղար Ս. Մուրադյանը ներկայացրեց Չարենցավան համայնքի ավագանու «Միասնական համայնք դաշինք» խմբակցության անդամ Մելիք Գասպարյանի դիմումը՝ ավագանու անդամության լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ: Նշվեց, որ դիմումին տրվել է ընթացք «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքին համապատասխան: 31.05.2024թ. թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի արձանագրության համաձայն՝ լիազորությունները վաղաժամկետ դադարեցրած Մելիք Գասպարյանի ավագանու մանդատը տրվում է ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Ավետիք Պետրոսյանին:

Մուրադյանը նիստի մասնակիցներին ներկայացրեց նաև Չարենցավան համայնքի ավագանու 17.05.2024թ. ուղերձը (անձնագրային ծառայությունների մատուցումը կրկին Չարենցավան քաղաքում իրականացնելու վերաբերյալ) ՀՀ ՆԳՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ չբավարարելու մասին գրությունը:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
2) Չարենցավան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

3) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատկացից գումար հատկացնելու մասին:
4) Քաղաքացու անվամբ գրանցված 07-015-0047-0032 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
5) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի թիվ 26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 1-ին ա թաղամասը վերահաստատելու մասին:
7) Չարենցավան համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը՝ օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 15 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

/Զեկ.Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. ***ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 16422.65 ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
01	06	1	Ընդհանուր բնույթի այլ ծառ/այլ դաս.չպատ/	4241	6610,0	500,0	0	7110,0

06	01	1	Բնակարանային շինարարություն	4521	0	14962,65	0	14962,65
09	05	1	Արտադպրոցական կրթություն	4511	330743,0	960,0	0	331703,0

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ավագանու անդամ Ա.Գալստյանի հարցադրումներին՝ թիվ 60 նախագծի «01-6-1 «Ընդհանուր բնույթի այլ ծառ./այլ դաս.չպատ./» 4241 սինթետիկ հաշվին հատկացնել 500,0 հազար դրամ Բջնի գյուղի մշակույթի տան գնահատման համար» ենթակետի վերաբերյալ, աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանը տվեց համապատասխան պարզաբանումներ:

Արդյունքում քվեարկության դրվեց և միաձայն որոշվեց՝ առանց այդ կետի նախագիծը ընդունելու վերաբերյալ:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը ՝ փոփոխված տարբերակով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, ***առաջարկում եմ.***

2. ***ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 20710.398_ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
01	06	1	Ընդհանուր բնույթի այլ ծառ/այլ դաս.չպատ/	4823	5400.0	5000,0	0	10400.0
06	01	1	Բնակարանային շինարարություն	4521	0	14750,398	0	14962,65
09	05	1	Արտադպրոցական կրթություն	4511	330743,0	960,0	0	331703,0

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 14 դեմ- 0 ձեռնպահ-11

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2 Չարենցավան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 27.1-րդ հոդվածի, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն՝ ըստ գործառնական ոլորտների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 15 դեմ-0 ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ.Ա.Զաքարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի Եսայան փողոցի 1-ին փակուղու 3 տան բնակիչ Անգին Թադևոսյանի 2024 թվականի հունիսի 06-ի թիվ 2651-16, Չարենցավան համայնքի Արզական գյուղի Սարալանջի 11 փողոցի 2 տան բնակիչ Տաթևիկ Վարդանյանի 2024 թվականի հունիսի 06-ի թիվ 2650-16 և Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 6-րդ շենքի 21-րդ բնակարանի բնակիչ Աննա Գալստյանի հունիսի 10-ի թիվ 2687-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Անգին Համազասպի Թադևոսյանին:**
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Տաթևիկ Գերասիմի Վարդանյանին :**
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Աննա Նվերի Գալստյանին :**
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

4. Քաղաքացու անվամբ գրանցված 07-015-0047-0032 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկ. .Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ համայնքային սեփականություն հանդիսացող 07-015-0047-0032 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը սխալմամբ գրանցվել է որպես քաղաքացու սեփականություն, ***առաջարկում եմ.***

1. Հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ որպես քաղաքացու սեփականություն գրանցված 07-015-0047-0032 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել Չարենցավան համայնքի սեփականությունը /կից ներկայացվում է հողամասերի հատակագիծը/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

5. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի թիվ 26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ***առաջրկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի «Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին» թիվ 26-Ա որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Աննման Մաթևոսյանին պատկանող 07-019-0413-0098 ծածկագրով 1.678286 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հնդավոր տարածքից 0.29065 հա մակերեսով հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական հողատեսքի, իսկ 0.04935 հա մակերեսով հողատարածքի նպատակային նշանակությունը փոխել որպես ջրային հողատեսքի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 1-ին ա թաղամասը վերահաստատելու մասին:

/Զեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ , ***առաջարկում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 1-ին ա թաղամասը վերահաստատել որպես՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 11-րդ թաղամաս:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բենիկ Բալբաբյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 25 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

7. Չարենցավան համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին:

/Զեկ. Վ.Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հաշվի առնելով, որ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Չարենցավան համայնքի կողմից ներկայացված «Չարենցավան համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները» ծրագիրը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից, ղեկավարվելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների դրույթներով՝ Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Չարենցավան համայնքի կողմից 2025 թվականին իրականացվելիք բնապահպանական ծրագրին՝ համաձայն հավելված (NN 1.2):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 14 դեմ- 1 ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Հարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր

Բաբայան Արայիկ

Բաբայան Նարեկ

Բաղդասարյան Սահակ

Գալստյան Արթուր

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Եփրեմյան Տարոն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մակինյան Վարդան

Մալխասյան Նորիկ

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Սահակյան Գառնիկ

Պապոյան Դավիթ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ